Մասնակցության հրավեր

Պատվիրատու՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Պատվիրատու, հրավիրում է հայտատուներին ներկայացնել հայտեր «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Տոլորսի ջրամբարի ջրընդունիչի ճաղավանդակի մաքրող համակարգի վերազինման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթի հետ կապված գնումների համար:

Բաց մրցույթի հղման համար ՝ «ՔԳՀԿ 17/25»
Երկիրը՝ Հայաստան
Մրցույթի մեկնարկի ամսաթիվ՝ 3 նոյեմբեր 2025 թ.
Հարգելի գործընկերներ,

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն (Պատվիրատու), հայտարարում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Տոլորսի ջրամբարի ջրընդունիչի ճաղավանդակի մաքրող համակարգի վերազինման աշխատանքների իրականացման համար փորձառու հայտատուի ընտրության մրցույթ:

1. Բաց մրցույթը կիրականացվի երկու փուլով: Հայտատուները տեխնիկական և ֆինանսական առաջարկները ներկայացնում են միանգամից երկու փակ ծրարներով Coupa էլ. գնումների համակարգի միջոցով (Coupa Supplier Portal (coupahost.com)): ՀՀ ռեզիդենտները փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային ստորագրության միջոցով, իսկ ոչ ռեզիդենտները՝ բնօրինակից սկանավորված տարբերակով:

2. Գնման ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են՝ ՀՀ Ֆինանսների նախարարության հրապարակած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հղում), և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հղում):

3. Հայտատուները պետք է իրենց առաջարկները ներկայացնեն էլեկտրոնային եղանակով՝ օգտագործելով Coupa համակարգը և հաշվի առնելով Coupa-ի օգտագործման պայմանները, ինչպես նաև սույն փաստաթղթով սահմանված բաց մրցույթի պայմանները:
4. Հայտերը կբացվեն և կգնահատվեն մրցութային փաթեթի պահանջների համապատասխան: Ցանկացած տեխնիկական առաջարկ, որը չի բավարարի մրցութային փաթեթի և/կամ տեխնիկական բնութագրի պահանջներին, կհամարվի չհամապատասխանող: Տվյալ հայտատուի ֆինանսական առաջարկը չի կարող դիտարկվել ֆինանսական առաջարկների բացման փուլում: Աշխատանքների տևողությունը 5 ամիս է՝ սկսած պայմանագրի կնքման օրվանից:
5. Առաջարկների ներկայացման վերջնաժամկետը 2025 թվականի Նոյեմբերի 28-ը, 17:00-ն, Երևանի ժամանակով: Հետաքրքրված ընկերությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալ սույն բաց մրցույթի

վերաբերյալ՝ իրենց առաջարկները ուղարկելով գնումների ավագ մասնագետ Ա. Պետրոսյան arman.petrosyan@contourglobal.com հասցեին, Հեռ +37411520029: Հայտատուները, ովքեր հետաքրքրված են այս գնումով, կարող են գրել. arman.petrosyan@contourglobal.com նշելով իրենց էլ. հասցեն հաստատել իրենց հետաքրքրությունը և ստանալ Coupa համակարգին մասնակցելու հրավեր:

6. Մրցութային փաթեթը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ընթացակարգին համապատասխան և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273Ա որոշմամբ (https://eservices.contourglobal.eu/armenia/): Բաց մրցույթը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն: Սույն մրցույթից բխող վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային փաթեթին ամբողջությամբ անվճար կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով. Box for All 1725